

ԴՈՒ ԿԸ ՀԱՆԳՑՆԵՍ, ԻՍԿ ԵՍ ԿԸ ՎԱՌԵՍ

Իւհաննի Ահօ-ի

(Շ Վ Է Ղ Ե Ր Է Ն Ի Յ)

Մութ էր: Ձմեռնային գիշերը տիրում էր երկրի վրայ: Արևը վաղուց անհետացել էլ, և ցածրիկ խրճիթներում արդէն լամպաներն արձակում էին իրանց սպիտակ լոյսը: Մարդիկ ուրախ էին, որ ունեն այդ լոյսը մինչև որ արշալոյսը կը ծագի: Բայց խաւար ցրող այդ լոյսը մթութեան չար ոգին չէր սիրում, որովհետև սա զօրութիւն էր ձեռք բերել մութ աշխարհում:

Հէնց որ մթութեան չար ոգին նկատում էր որ խրճիթների պատուհաններից լոյս է երևում, նա իսկոյն բացում էր դուռը և ներս վազում:

—Փհհհ, անում էր նա և առանց բացառութեան հանգցընում լամպան:

Եւ ոչ ոք քաջութիւն չունէր լամպան նորից վառելու՝ չար ոգու հանգցնելուց յետոյ:

—Ի՞նչ պէտք է անել հիմա,—հարցնում էին միմեանցից ցածրիկ խրճիթների խաւարում նստած բնակիչները:

Հազիւ մթութեան չար ոգին հեռացել էր, երբ լոյսի հանձարը թռաւ և դուինց ներս մտաւ:

—Դու կը հանգցնես, իսկ ես կը վառեմ,—ասաց նա և վառեց սեղանի վրայ դրած մոմը:

Եւ այսպէս վարուելուց յետոյ, նա շտապեց չար ոգու յետևից, որ ուրիշ խրճիթների մոմերը նոյնպէս հանգցնում էր և մարդկանց խաւար մթութեան մէջ թողնում: Բայց լոյսի բարի հանձարը գնում էր նրա հետքերով և վառում մոմը:

Երբ չար ոգին իր շուրջը նայեց, տեսաւ որ խրճիթներում դարձեալ լոյս կայ, նորից վազեց առաջին խրճիթը:

—Փհհհ, փհհհ, արեց նա ու հանգցրեց լոյսը, և ոչ ոք քաջութիւն չունէր լոյսը վառելու:

—Հիմա նա մոմն էլ հանգցրեց, ի՞նչ պէտք է անել,—հարցրին միմեանցից մթութեան մէջ նստած մարդիկ։

Իայց հագիւ էր մթութեան ոգին շէմքից դուրս եկել, երբ լոյսի հանճարը շտապեց մտնել բաց դռնից և շշնջալով հարցրեց, արդեօք տանը ծղաններ (pärator, пучина) կան։

Այո, ծղաններ շատ կային. մեծ պապիկը փայտ էր ծղանել և նրանցից մեծ պաշար պատրաստել։

—Դու կը հանգցնես, իսկ ես դարձեալ կը վառեմ,—ասաց լոյսի հանճարը, վերցրեց ծղաններից մէկը և օջաղի կրակից կպցրեց։

Եւ ամեն տեղ, ուր մտնում էր լոյսի հանճարը, այնտեղ վառուեցան ծղանները։

Չար ոգին դարձեալ տեսաւ, որ ամենուրեք, ուր նա հանգցրել էր, լոյս կար։ Այժմ երրորդ անգամ շտապով մտաւ նա խրճիթի դռնից։

—Փոհ, արեց նա. իսկ ծղանը չէր ուղում հանգչել։

—Փոհ, փոհ, և միայն երբ նա փչեց երրորդ անգամ, փայտից արծակուող լոյսը հանգչեց։

Հիմա էլ ոչ ոք քաջութիւն չունէր. վառելու լոյսը, որ մթութեան չար ոգին բարկութեամբ հանգցրել էր։

—Ի՞նչ անենք այժմ,—հարցրին միմեանցից մթութեան մէջ նստած մարդիկը, երբ լոյսի հանճարը մտաւ դռնից։

—Օջաղը վառէք, կանչեց նա, և իսկոյն բոլոր խրճիթներում մեծ լոյս երևաց։ Բարի հանճարի աչքերը փայլատալում էին այդ լոյսի առաջ, երբ նա բացագանչեց.

—Դու կը հանգցնես, իսկ ես կը վառեմ։

Եւ ամեն տեղ, ուր մթութեան չար ոգին հանգցրել էր ծղանները և մարդկանց մեծ վիշտ պատճառել, լոյսի հանճարը վառում էր օջաղի մէջ ուրախարեր կրակ, որից ճանապարհները լուսաւորւում էին և եղէնիների գոգաթները կարմրում։

Մթութեան չար ոգու բարկութեանը չափ չկար. աչքերը չուած, թշերը սաստիկ փքած՝ նա քամու արագութեամբ ներս մտաւ սենեակը։

—Փոհ, փոհ, փոհ,—փչում էր նա,—փոհ, փոհ, փոհ, —տնքում և հեւում էր նա. բայց որքան շատ էր նա փչում, այնքան աւելի պայծառ էր բորբոքւում կրակը օջաղում, և այժմ լոյսը ընկնում էր ոչ միայն ճանապարհների վրայ և ոչ միայն եղէնիների գագաթներն էին կարմրում լոյսից, այլ նա բարձրանում էր ծխնելոյզով դէպի երկինքը և հեռու գիւղերից նոյնիսկ օտար երկրներից նկատում էին այդ լոյսը։

Չար ոգին շատ աշխատեց, գործ դրեց իր բոլոր ոյժերը...

բայց մինչև նա փչում էր, մինչև նա չարչարում էր առանց
որևէ յաջողութեան, գիշերն արդէն անցել էր, արևը ծագել,
այլևս արհեստական լոյսի կարիք չկար և մթութեան չար ոգին
իզուր էր աշխատել:

Այսպէս՝ օրով չար ոգին անզօր է, իսկ գիշերը լոյսի հան-
ճարը արթուն է և պաշտպանում է երկիրը:

Տիկին. Մ. Մ.—Բ.

*
* *

Լազուր երկնքով ամպեր են անցնում,
Ու ոտավի ուռին կուլայ գետափին.
Ամպերի շուքը դաշտերն է ծածկում.
Սիրտս կըծում է կսկիծը խորին...

Վառ արեն հանգաւ սարերի յետքում,
Մութը թևերը փռեց ամեն գին.
Անգիւման դարդը սիրտս է մաշում,
Ա՛խ, ծաղիկ թողմար, ընկեր իմ անգին...

Ո՞ւր ես, հոգի ջան, չը կմա դու հիմա.—
Հողերուն հաւսար ու անգերեզման.
Ա՛խ, քամին հիմա վերադ կը սգայ.—
Դու չես իմանում, աղիդ ընկեր ջան...

Ա. Խսահակեան: